

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւան 6 ռուբլի  
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բայ է առաւօտեան 10—2 ժամ  
(բայի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.  
Տէլէֆոն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հոգատարութեան օրինակ.—Ներքին ՏԵ-  
ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաչափից վնասված-  
ների օգտին. Նամակ Կարսից. Նամակ Դուբա-  
յից. Շամակ Շուշիէրից. Նամակ Խմբագրու-  
թեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-  
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարս-  
կաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.  
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.  
Նամակ Շվեյցարիայից:

## ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ

Մի տան օր սրանից առաջ, փետրվա-  
րի 22-ին, Հիւսիսային Կովկասի նահան-  
գապետներին մէկը, այն է Տերեկեան շրջ-  
անի գլխավորը ուղարկեց բոլոր գիւղա-  
կան վարչութիւններին մի հետաքրքրական  
շրջաբերական, որի մէջ ասված է հե-  
տեւեալը: Տերեկեան շրջանի ազգաբնակի-  
ւոնք գլխավոր պարագայում, հոգա-  
գործութիւնը, օրից օր վատանում է,  
հունձը պակասում է, հացահատիկները  
ստացվում են մանր, չմշկած եւ վտիտ:  
Այդ տխուր հանգամանքի պատճառներին  
մէկն էլ այն է, որ գաշտերը վարելու ե-  
լանելու ժամանակ ուշը չեն դարձնում  
այն հատիկի վրա, որ սերմանում են: Այդ  
սերմացուն յաճախ լինում է վատ յատ-  
կութեան, խառն ուրիշ օտար, ապարդիւն  
բոյսերի սերմերի հետ եւ չունի բաւական  
նաւափ ուժ քիմիաբերական զանազան անըն-  
պատ ազդեցութիւններին: Այդի ա-  
ռաջ ունենալով այդ հանգամանքը, նահան-  
գապետը առաջարկում է գիւղական վար-  
չութիւններին հրաւիրել գիւղական հա-  
սարակական ժողովներ եւ այնտեղ պար-  
զելով ներկայ գրութեան պակասութիւն-  
ները, թերաբեր նրանց գնելու գոյնի  
մեքենաներ հացը մաքրելու, գտելու եւ  
տեսակների բաժանելու նպատակով: Մե-  
քենաները կարելի է գնել գիւղի ընդհա-  
նուր հաշվով եւ յետոյ հանգցնել նրա ար-  
ժէքը, սահմանելով որոշ վճար օգտվող-  
ներին:

Նահանգապետի ներկայ կարգադրու-  
թիւնը շատ համակրելի մի երևոյթ է,  
որովհետեւ նա հանդիսանում է իբրեւ մի  
նախաձեռնութիւն, որից այնքան  
զուրկ է դաւաճող եւ մանաւանդ գիւղական

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՄԱԿ ՇՎԵՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ժ ըն ի վ, փետրվարի 8-ին  
Արեւմտեան Եւրոպայի կրթական գործում  
մեծ դեր են խաղում կօնֆէրանսները:

Կօնֆէրանսները նոյնն են այստեղ, ինչ որ  
հրապարակական դասախօսութիւնները Ռու-  
սաստանում, այն տարբերութեամբ միայն, որ  
վճարովի չեն ու պատահական, ինչպէս մեզ-  
նում, այլ ձեռք ու պարբերական, եւ չեն տե-  
ւում մի քանի ժամ, այլ միայն մի ժամ (սովոր-  
աբար երեկոյեան 8-ից մինչեւ 9-ը):

Ժ ըն ի վ, փետրվարի 8-ին  
Քաղաքում (80,000 բնակիչ) օր չէ անցնում  
գրեթէ առանց դասախօսութեան: Համարեա  
ամեն մի կրթական հաստատութիւն եւ ընկե-  
րութիւն իր պարագն է համարում կազմակեր-  
պել կօնֆէրանսների մի շարք ամենատարբեր  
գիտական, գրականական եւ հասարակական  
հարցերի մասին:

Այդ կօնֆէրանսների համար հրաւիրվում  
են յայտնի դասախօսներ տեղական կամ զբա-  
ղւթից, որոնց մէջ կան մարդիկ, որոնք հրա-  
պարակախօսութեան, այսինքն հրապարակօրէն  
խօսելու արձեւում հասցրել են ամենաբարձր  
կատարելութեան: Փրանսիայում, օրինակ, կան  
յայտնի կօնֆէրանսներ (հրապարակա-

մասան: Այստեղ չը կայ ոչ մի ճնշում,  
ոչ մի անխուսափելի հրաման, որ ստի-  
պի մարդկանց անպատճառ ձեռք բերել  
օգտաւէտ համարված մեքենան. բայց կայ  
մի խորհուրդ, մի քաջալերութիւն, մի  
հայրական հոգատարութիւն, որոնք կա-  
րող են դրդել լուրջ կերպով զբաղվել գիւ-  
ղական կեանքի կարեւոր հարցերից մէկով  
եւ տալ նրան նպատակայարմար լուծում:

Պէտք է նկատել, որ Տերեկեան շրջանի  
գլխավորից ցոյց տուած երևոյթը շատ  
ձիշդ է եւ նրա առաջարկած միջոցը խե-  
լացի: Նոյն գրութիւնը տեղի ունի եւ  
Անդրկովկասում, որտեղ գիւղացիները գեո-  
շատ քիչ են ծանօթ գոյնի մեքենաների  
գործադրութեանը եւ միայն մի քանի տե-  
ղերում են նրանց ձեռք բերել: Անխաւած,  
աւելի ձիշդ կարելի էր օգնել ժողովրդա-  
կան մասնային տեղական ինքնավարու-  
թեան կամ գեմնտօի հիմնարկութիւննե-  
րի միջոցով, որովհետեւ այն ժամանակ  
կարելի էր լինէր կազմակերպել ժողովրդի  
գիւղատնտեսական օգնութեան գործը ա-  
ւելի յարատեւ եւ կանոնաւոր կերպով:  
Բայց քանի որ այդ հիմնարկութիւնները  
չը կան, ուրախայի է, որ վարչական շրջ-  
անները կամ հասարակական հիմնարկու-  
թիւնները վերցնում են իրանց վրա օգ-  
տաւէտ նախաձեռնութիւն:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### Մ Ա Մ Ո Ւ Լ

Մենք արդէն ասել ենք ունեցել յիշու թէ  
Թիֆլիսի քաղաքային ուսարավայի մէջ վերջին  
տարիներս ինչ վայրերի հասկացողութիւններ  
են հաստատվել ամենատարակաւ մաքրելի, ի-  
րողութիւնների դէմ: Կովկասեան մաքրաքաղա-  
քի փողոցները, լուսաւորութիւնը ոչ մի «մայ-  
րաքաղաքային» յատկութիւն չունեն, իսկ մեր  
խորթ հայրերը նստած են իրանց պատուաւոր  
եւ փափուկ բազմաթիւների վրա ոչ թէ այդ  
կարիքների ու պակասութիւնների մասին մը-  
տածելու, այլ իրանց տիրոջները որոշելու,  
չուր ծնծելու համար: Նորերումս այդտեղ մի  
անկող դէպք պատահեց. ուսարավայի ծառայող-  
ներից մէկը յանդիմութիւն ունեցաւ թղթի  
վրա անուանել ուսարավայի անդամ Շետա-  
կովին «պարոն»: Եւ ահա ամբողջ մի հարց,

կան դասախօսներ), ինչպէս կան յայտնի բա-  
նաստեղծներ, հրապարակագիրներ, գերասան-  
ներ, եւ նրանք պոետներ են անում զանա-  
զան քաղաքներ եւ հրաւէր են ստանում այլ  
եւ այլ տեղերից առաջնակարգ գերասանների  
նման: Ժ ըն ի վ էլ այդ քաղաքների թւում է,  
որովհետեւ մտաւոր կողմից ժընկը Ֆրան-  
սիայի պրօվինցիան է: Անցեալ տարի Պա-  
րիզից հրաւիրված էին այստեղ կօնֆէրանսներ  
տալու յայտնի հայաւէր Էմիլ Բէռար (կրէտէի  
եւ Մակեդոնիայի մասին) եւ յայտնի վիպա-  
գիր Ռենէ Բադէի (Փրանսիական դաւաճող դրա-  
կանութեան մէջ):

Այդ դասախօսներին հրաւիրող ժընկը ժո-  
ղովրդական լուսաւորութեան դէպարտամենտն  
էր, որ կօնֆէրանսների համար յատկացնում է  
համարակարգի ընդարձակ ու գեղեցիկ երկար-  
կանի հանդարարանը:

Մի շարքի առաջ երկու երեկոյ իրար յե-  
տեւից այդ հանդիսարանը պոկէ պոռնակ լին-  
էր հասարակութեամբ: Դասախօսում էր Հո-  
մից հրաւիրված Էմիլ Բէռար:

Պրօֆէսոր Ֆէրրիի անունը անշուշտ յայտնի  
էր լինի ձեռնարկներից շատերին, թէկուզ  
հենց այն պատճառով, որ նա մի ժամանակ  
աշխատակցում էր (կարծեմ, այժմ էլ չարու-  
նակում է աշխատակցել) ռուս ազգաբնակիչ լը-  
րագիրներին:

Ֆէրրի աչքի ընկնող անձնաւորութիւն է,  
թէ իբրեւ գիտական եւ թէ իբրեւ հասարա-  
կական գործիչ (նա պատգամաւոր է խաղա-  
կան պարամենտում եւ խմբագրում է «Avanti»

իրարանցում. քաղաքագիտութեան ընդհանուր  
ձախուժ է յանդիմութիւն գործող պաշտօնային  
եւ ուսաց համարեա ամբողջ մամուլը արձա-  
նագրում է այս անգին մեծագործութիւնը,  
չը մոռանալով, ի հարկէ, ծաղրել ամենա-  
զանք թոյնի թափել քաղաքագիտի վրա:  
«Кавказъ» լրագրի ֆիլիսոփայութեամբ, բերելով մի  
շարք փաստեր մեր քաղաքային ինքնավարու-  
թեան այդ տեսակի զարմանալի «գործունէու-  
թիւնից», յիշում է եւ «պարոնի» հարցը:

Այդ հարցի վերաբերմամբ նշանակված էր  
մի յատուկ խորհրդակցութիւն քաղաքագիտի  
եւ ուսարավայի այն անդամի մէջ, որ վերա-  
ւորված է իրան յատկացրած «պարոն» անու-  
նից. խորհրդակցութեան հետեւանքն այն  
եղաւ, որ «պարոն» խօսքը, երբ նա գործ է  
ածվում ուսարավայի անդամի հասցեով, ան-  
պայման վերաւորական է:

Հրաշալի են մեր գոգոյեան տիպերը, չէ:  
Կարելի է երգել, որ այսպիսի «գործիչներ»,  
այսպիսի հասկացողութիւններ եւ մանաւանդ  
այսպիսի խորհրդակցութիւններ լուսնի տակ  
միայն եւ միմիայն Թիֆլիսում կարելի է գտնել:  
Թող իմանայ տիեզերքը, որ Երեւանեան հրա-  
պարակի տան մէջ սքանչելի կարգադրութիւն-  
ներ անդիմների համար չէ հանրամարդկային  
«պարոն» անունը: Նրանք պարոններ չեն...  
Հապա ինչ են: Այդ էլ, երեւի, կը լուծէ պատ-  
մութիւնը:

Թիւրքահայ որբիկների կեանքից հետեւալ  
պատմութիւնն է անում «Արեւելք» լրագիրը:

Անցեալ նոյեմբերին հրատարակված էինք  
Մարտիկայէն նամակ մը, որուն մէջ տխուր  
ու ճշտմանցուցիչ իրողութիւնը կը պատմու-  
էր թէ Կիլիկիայի երիտասարդ մը՝ յաջողելով  
չորս որբուհիներ կորզել իրանց մայրերուն  
գիրկէն, Կիպրոսէն մինչեւ Ամերիկա տարե-  
ր է գտնել, շահագործելու դիտումով: Այդ որ-  
բերն էին՝ Ազիլը Մեքսիկեան 9 տարու, Լուի-  
զա Մեքսիկեան 5 տարու, Աննիկ Թեքսեան 11  
տարու եւ Միհրանոյ 2 տարու հետ 6 տարու:  
Նամակագիրը կաւեցնէր.—«Վերոյիշեալ Կի-  
լիկիայի երիտասարդը, համոզելով սոյն չորս  
փոքրիկ որբուհիներուն անխել մայրերը թէ  
դանտը հարուստ Ամերիկայի ընտանիքնե-  
րու ներկայացնելով՝ կրնան բաղում նպաստ  
ձեռք բերել, կանչէ խեղճ փոքրիկները եւ կը  
տանի մինչեւ Նիւ-Եօքը: Տեղւոյն ըստիկանու-  
թիւնը սակայն, կասկածելով երիտասարդին  
վրայ հարցաքննելու համար վաղ կը դնէ զայն.  
երիտասարդը տեսնելով որ օձիքը ձեռք պի-  
տի տայ, կը փախչի: Ոստիկանութիւնը Հալի-  
կը վերադարձնէ որբերը, զորս բարեբաղդա-  
բար հայ ճամբորդներ կանեն եւ Մարտիկա

լրագիրը:

Իբրեւ գիտական, նա Լամբրոզիոյ աշակերտն  
է եւ պատկանում է ոճագէտների մարդաբա-  
նական դպրոցին (антропологическая школа  
криминалиста), իսկ իբրեւ քաղաքական գոր-  
ծիչ ու հրապարակագիր նա դաւանում է ըն-  
կերակարական սկզբունքներ:

Ինչպէս տեսնում էք, որոշ հակասութիւն կայ  
Ֆէրրիի գիտական եւ քաղաքական հայեացք-  
ների մէջ, որովհետեւ, ընդունված կարծիքով,  
Լամբրոզիոյ դպրոցը ճշող, եթէ ոչ բացատրիկ,  
դեր է վերագրում յանցանքների առաջացման  
հարցում մարդաբանական պատճառներին (ժա-  
նանգված մարմնական յատկութիւններ), մինչ-  
դեռ ընկերակարականները յանցանքների աղբիւ-  
րը տեսնում են հասարակական պայմանների  
(աղքատութիւն եւ այլն) մէջ:

Ֆէրրիի բողոքում է այդ ընդունված կարծի-  
քի դէմ: Ոչ Լամբրոզիոն, ոչ էլ մանաւանդ նրա  
աշակերտները երբեք չեն պնդել, թէ մարդս  
յանցանք է գործում միմիայն այն պատճա-  
ռով, որ նա ի ծնէ պատկանում է յանցաւոր  
տիպի, այսինքն ժառանգել է այս ինչ կամ այն  
ինչ մարմնական արատները եւ հետեւաբար  
ոճագործ հակույններ, որոնք նրան ճակատագ-  
րօրէն մղում են դէպի ոճագործութիւն: Այդ  
թիւրիմացութիւն է, որ արդէն պարզվել է  
ոճագէտների 1896 թւին ժընկուտ տեղի ու-  
նեցած ժողովում: Ոճագէտների պօզիտիւ  
վիստ դպրոցը (եթէ ընդունենք Ֆէրրիի բա-  
ցարարութիւնը, այդ անունը աւելի համապա-  
տասխան պէտք է համարվի խաղաղական զբաղ-

բերելով կը յանձնեն Գէորգ եպիսկ. Իւթիւ-  
ճեանին՝ որ եկեղեցւոյ ընմէն պարսաւելով  
Կիլիկիայի երիտասարդին անխել արարքը,  
հանգանակութիւն կատարեց, որպէս զի յիշեալ  
որբուհիները վերադարձուին իրենց մայրե-  
րուն գիրկը:

Բայց որբուհիների ողբականը այդքանով  
չէ վերջանում: Նրանց չար Մենտօրը փորձում  
է բացատրել եղելութիւնը այնպէս, որ կարո-  
ղանայ արդարացնել իր գլուխը, սակայն «Արե-  
ւելքը» հերքում է այդ բացատրութիւնները,  
հաստատելով որ մերկ իրողութիւնն է մնում  
այն, ինչ հաղորդված է եղել Մարտիկի թղթակ-  
ցութեան մէջ: Բայց դա այնքան էլ էական չէ:  
Ուրեմն է չորս փոքրիկ երեխաները Ամերիկա  
տանող մարդը թէ խաբւել է—այդ մի են նոյն  
է: Իրողութիւնը այն է, որ չորս երեխաներ  
Կիպրոսից Նիւ-Եօքի են գնում եւ վերադարձն-  
վում են Մարտիկ: Անտէրութեան այս անգին  
չափը մի փոքրիկ փաստ է, որ ցոյց է տալիս  
թէ ինչ պիտի լինեն միւս որբերը, որոնք ըն-  
ված են երկրում եւ որոնք իրանց դժբաղդ  
ողբականների մէջ չեն կարող պատահել այն-  
պիսի նաւահանգիստների, ինչպէս Մարտիկը,  
չեն էլ կարող յոյս ունենալ թէ իրանց անգու-  
ճակատագրի պատմութիւնը արձագանք կը գտնէ  
մամուլի մէջ...

## ԵՐԿՐԱՆԱՐԺԻՑ ՎՆԱՍԱՎՈՒՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալքալաքի երկրաչափից վնաս-  
վածների օգտին:

Աստրախանից՝ Արիստակէս արքայա-  
կոպոս Սեդրակեանից 100 ռուբլի (տես Նամակ  
Խմբագրութեան):

Բապոնից՝ Գառնիկ Մերեմեանից 25 ռուբ-  
լի, որ հանգանակված է մի խնձորի ժամանակ:  
Տագանրօգից՝ Օհան Օհանեանից 21 ռ.  
15 կոպէկ: (Նուիրատուների ցուցակը չենք  
ստացել):

Ընդամենը 146 ռուբլի 15 կոպ.:  
Մինչեւ այժմ ստացել ենք 27,933 ռ. 76 1/2  
կոպէկ, երեք ոսկի ռուպլի եւ 50 խաղաղական  
լիւրա: Ուղարկել ենք 26,500 ռուբլի, 3 ոս-  
կի ռուպլի եւ 50 խաղաղական լիւրա: Մեզ մօտ  
մնում է 1433 ռ. 76 1/2 կ.

## ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

### Փետրվարի 28-ին

Անցեալները Երեւանի կօնստիտուցիոն հրա-  
մանով պատեղ էր եկել Ալեքսանդրօղլի յա-  
ջորդ Մատթէոս վարդապետ Մատթէոսեան տե-  
րոցի համար, քան մարդաբանական անունը

ընդունում է ոճագործութեան երեք ընդհա-  
նուր, հիմնական պատճառներ—մարդաբանա-  
կան, տէլուրիական (ֆիզիքական միջավայր,  
կլիմա եւ այլն) եւ հասարակական: Յանցանքը  
այդ երեք պատճառների արտագրումն է,  
այնպէս որ մարդ կարող է ծնվել յանցաւոր հա-  
կունքներով, բայց երբեք յանցանք չը գործել,  
եթէ չընպատուր պայմանները նպաստաւոր են  
աղին կեանք վարելու համար:

Հապա ինչից են առաջացել այդ թիւրիմա-  
ցութիւնը իսկական դպրոցի վերաբերմամբ:  
Երկու պատճառով, ասում է Ֆէրրի: Լամբրոզիոյ  
գիրքը, որ լոյս տեսաւ իտալերէն սրանից մօտ  
քսան տարի առաջ, բաղկացած էր երեք հա-  
տորից: Առաջին հատորում հեղինակը խօսում  
էր յանցանքի վերոյիշեալ երեք ծնիչ պատճառ-  
ներից միայն մէկի—մարդաբանական գործոյի  
մասին: Մինչեւ վերջին ժամանակներս օտար  
լեզուներով թարգմանված էր Լամբրոզիոյ գրքի  
միայն այդ հատորը եւ օտարները կարծում էին,  
թէ այդ գործուն միակն է, որ ընդունում է  
Լամբրոզիոն, մանաւանդ որ վերջինս, իբրեւ նո-  
րամուծիչ (սովատոր) մի քիչ ծայրայեղութեան  
էր հասցրել իր վարդապետութեան մէջ այն  
տարրը, որ նորութիւն էր գիտութեան մէջ:

Շատ բնական էր, ասում է Ֆէրրի, որ Լամբ-  
րոզիոն ընկաւ ծայրայեղութեան մէջ: Ով որ նոր  
բան է մտնում գիտութեան մէջ, անպատճառ  
պէտք է անախորձ կերպով բաղլի (choquer)  
ընդունված կարծիքները: Այլապէս ոչ ոք ու-  
չաղրութիւն չի դարձնի նոր տեսակէտի վրա

(Կը շարունակվի)



